Հավելված
ՀՀ Սյունիքի մարզի
Մեղրի համայնքի ավագանու
2024թ. հունիսի 19-ի N58-Ա որոշման

ՀԱՅՏ

Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված մասհանումների ծախսերի ծրագիր

Ծրագրի անվանումը	*ՄԵՂՐԻ ՔԱՂԱՔԻ ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ՄԱՐԶԱԴԱՇՏԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ*
Մարզ	*ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ*
Հ…մայնքը /համայնքները	*Համայնքի անվանումը՝ Մեղրի համայնք*
Համայնքի /բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից, ինչպես նաև մարզկենտրոնից	*Մեղրի համայնքի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից 385 կմ է, մարզկենտրոն Կապանից՝ 85 կմ:*
Համայնքի /բնակավայրի բնակչությունը	*Մեղրի համայնքի բնակչությունը ՝ 12919 մարդ*
Ծրագրի ընդհանուր նկարագրությունը և դրա իրականացման անհրաժեշտությունը	*Մեղրի համայնքի մարզադպրոցը կառուցվել է 1960-1970 թթ. : Մարզադպրոցը ունի 1 հա տարածք, մարզադաշտի մակերեսը կազմում է 5000 մ^2 : Մարզադաշտի տարածքը գտնվում է մի կողմից քաղաքի բազմաբնակարան շենքերի հարևանությամբ, մյուս կողմից՝ Մեղրի քաղաքի թիվ 1 միջնակարգ դպրոցի հարևանությամբ և հանդիսանում է Մեղրի քաղաքի միակ մարզադաշտը: Համայնքում գործում են ֆուտբոլի, կարատեի խմբակներ: Խմբակների սաների մարզումները, ինչպես նաև քաղաքի հանրակրթական դպրոցների աշակերտների ֆիզիկական պարապմունքները, սպորտային միջոցառումները իրականացվում են նշված մարզադաշտում: Ներկայումս Մեղրի համայնքի հանրակրթական դպրոցներում սովորում են շուրջ 1561 աշակերտներ և համայնքն ունի սպորտի զարգացման մեծ ներուժ: Մեղրի քաղաքի մարզադաշտի անբարեկարգ վիճակը խոչընդոտում է սպորտաձևերի լիարժեք զարգացմանը և բացօթյա մարզական միջոցառումների կազմակերպմանը: Ներկայիս մարզադաշտի անմխիթար վիճակը դարձել է համայնքի առաջնահերթություններից մեկը, որը շուտափույթ*

	լուծում է պահանջում: Մարզադաշտի վերանորոգումը հնարավորություն կտա մարզային, հանրապետական, միջազգային մրցաշարերին մասնակցելու նպատակով նախապատրաստական մարզանքներ իրականացնել, ինչպես նաև համայնքում մասշտաբային մրցաշարեր կազմակերպել: Ծրագրով նախատեսված ծախսերը կապիտալ բնույթի են: Վերանորոգվող մարզադաշտը համայնքային սեփականություն է: Հրատապությունից ելնելով ծրագրով նախատեսվում է վերանորոգել Մեղրի քաղաքի մարզադպրոցի մարզադաշտը, որի ուսումնասիրությունից պարզվել է՝ **Առկա խնդիրները.** ➢ Մեղրի քաղաքի մարզադպրոցի մարզադաշտի անբարեկարգ վիճակ ➢ Երիտասարդների ֆիզիկական ակտիվության, բացօթյա ժամանցի կազմակերպման սակավ հնարավորություններ ➢ Արտադպրոցական մարզական կրթության ոլորտում երեխաների ընդգրկվածության ցածր մակարդակ ➢ Համայնքում մարզային մրցումներ անցկացնելու, մարզական միջոցառումներ հյուրընկալելու պայմանների բացակայություն
Ծրագրի ակնկալվող արդյունքները	**Ծրագրի իրագործման արդյունքում հնարավոր կլինի հասնել վերոնշյալ խնդիրների լուծմանը և ծրագրի իրականացման նպատակներին, որոնք են՝** • Կվերանորոգվի Մեղրի քաղաքի մարզադպրոցի մարզադաշտը, համայնքի արտաքին գրավչությունը կբարձրանա, Մեղրի համայնքը կունենա բարեկարգված ենթակառուցվածքներ և սոցիալ-տնտեսական զարգացման բարձր մակարդակ • Կզարգանան առկա սպորտաձևերը, կստեղծվեն նոր սպորտային խմբակներ՝ ուղղված այլ սպորտաձևերի տարածմանն ու զարգացմանը • Կբարձրանա երիտասարդների ֆիզիկական դաստիարակության, առողջ ապրելակերպի մակարդակը • Կստեղծվեն պայմաններ համայնքում սպորտային մեծ մրցումներ, մրցաշարեր, մշակութային մասշտաբային փառատոներ և այլ միջոցառումներ անցկացնելու համար Ծրագիրն ունի համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ուղղվածություն, համահունչ է Մեղրի համայնքի 2022-2026

	թվականների հնգամյա զարգացման ռազմավարությանը, որով Մեղրի խոշորացված համայնքի կայուն և համաչափ զարգացման գրավականներից են մարզամշակութային կյանքի ակտիվացումը, ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսումը, ինչպես նաև մարզական խմբակների և դրանցում ընդգրկված սաների թվաքանակի աճը: Մարզադաշտի վիճակի բարելավումն ընդգրկված է 2024 թվականի առաջնահերթ լուծում պահանջող խնդիրների շարքում: «Մեղրի քաղաքի մարզադպրոցի մարզադաշտի վերանորոգում» ծրագրով նախատեսված միջոցառումների ուղղությունները համապատասխանում են ՀՀ կառավարության կողմից 01.09.2022թ. սահմանված՝ «Համայնքային մասհանումների ծախսման ծրագրով նախատեսված միջոցառումների ուղղությունները, դրանց առաջնահերթությունները հաստատելու մասին» թիվ 1370-Ն որոշմանը: Դրանք են՝ • մշակույթ, սպորտ և երիտասարդության զբաղվածություն / մշակույթի տան, գրադարանների, թանգարանային շենքերի ու շինությունների, սպորտային նշանակության մարզական և խաղային հրապարակների, խաղադաշտերի կառուցում և վերանորոգում / Ծրագրի իրագործման ընթացքում և ավարտին կանխատեսվող ռիսկերն են՝ • ոչ բարենպաստ եղանակային պայմաններ
Ծրագրի ազդեցությունը համայնքի և շահառուների վրա	***Շահառուների քանակը:*** ➢ Նախադպրոցական տարիքի 443 երեխաներ և դպրոցական տարիքի մոտ 1561 աշակերտներ ➢ Մեղրի համայնք այցելող զբոսաշրջիկներ
Ծրագրի ընդհանուր բյուջեն	Ծրագրերի ընդհանուր բյուջեն՝ 93652.9ՀՀ դրամ (100%)
Ծրագրի իրականացման տևողությունը	Տևողությունը՝ 01.07.2024թ. - 30.12.2024թ.
Հայտի լրացման ամսաթիվ	03 հունիսի 2024թ.

Համայնքի տնտեսական պատասխանատու՝ **Ա.ԱՆՏՈՆՅԱՆ**
Հեռախոսահամարը՝ 099925595
էլեկտրոնային փոստը՝ meghricity@mail.ru

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Խ. ԱԴՐԵԱՍՅԱՆ**